

# ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

## ԴԱՐՁՅԱԼ ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՐՑԱԿԱՆ- ՀԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՔԵՐՑԱԼ

### Հ. Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Այս պրորբեմին նվիրված մեր մի հոդվածում\*, քննության առնելով գրաբարի հարցական-հարաբերական դերանունների կազմը, հանգամանորեն անդրադարձել էինք միայն ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ, ինչպես նաև ո՞ր, քանի՞, հարցականներին, որոնք նոր քերականների կողմից ճանաչված են որպես հարցական դերանուններ, իսկ նրանց անհարցական կիրառություններից հարաբերականների կազմում ընդգրկվել է միայն ու-ը:

Սույն հոդվածում քննվելու են նաև գրաբարի հետևյալ հարցականները՝ ո՞րպէս, ո՞րպիսի, ո՞րչափ, ո՞րքան, յո՞, յո՞վ, ո՞ւր, ուտի՞, ե՞րբ, զիա՞րդ, ընդէ՞ր, որոնք հին ու նոր քերականների կողմից դասված են հարցական անունների կամ հարցական մակբայների մեջ, շնայած, ինչպես ստորև ցույց կտրվի հանգամանալից փաստերով, նշված հարցականները ևս դրսևորում են հարցական դերանուններին բնորոշ իմաստային, հնչերանգային և կիրառական առանձնահատկություններ, ուտի և պետք է համարվեն հարցական, իսկ նրանց անհարցական գործածությունները (հարաբերական իմաստով)՝ հարաբերական դերանուններ:

Հին քերականներից բացառություն է կազմում Ոսկան Երևանցին, որը շափ, քան, պիսի բաղադրիչներով կազմված բառերը՝ ուրքան, ուրչափ, ուրպիսի, ինչպես նաև ուտի-ին համարել է դերանուն: Իսկ Ա. Առաքելյանը հարցական դերանունների մեջ է դրել նաև յո՞-ն:

Գ. Զահուկյանը այս բառերի մի մասը փաստորեն համարել է հարցական, իսկ նրանց անհարցական տարբերակները՝ հարաբերական դերանուններ: Նման մոտեցում է դրսևորել նա Դիոնիսիոս Քրակացու կողմից խոսքի մասերի դասակարգման հարցերը քննելիս: Ահա. «Քրակացին տարբերում է անվան 23 տեսակ, որոնց մեջ դնում է գոյականները, թվականները և դերանունների մի մասը (ընդգծումը մերն է. — Հ. Ա.)»<sup>1</sup>: Քրակացու կողմից հարցական համարվող անունները (ո, ու, ուրքան, ուրչափ, ուրքան), ըստ Զահուկյանի, հարցական դերանուններ են, իսկ «անորիշը» (ու ու, ուրպիսի ու, ուրչափ, ուրքան)՝ հարաբերական դերանուններ<sup>2</sup>: Քրակացու գրքում «Մակբայի տեսակների մեջ, — շարունակում է Զահուկյանը, — բացի բուն մակբայներից, բերվում են նաև միջարկությունները և մակբայանիշ ցուցական ու հարցական դերանունները»<sup>3</sup>: Ուրեմն, Քրակացու կողմից մակբայ կոչվող որոշ բա-

\* Գրաբարի հարցական-հարաբերական դերանունները և քանից ըմբռնումը հայ քերականագիտության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1992, № 1:

<sup>1</sup> Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 80:

<sup>2</sup> Աճ, էջ 81:

<sup>3</sup> Աճ, էջ 82:

ոներ Ձահուկյանը համարում է մակրայանիչ ցուցական կամ հարցական դերանուններ: Իսկ Քրակացին հարցական մակրայաներ է համարել ուստ, երբ, «մատարկայի կամ ճշգրտության» մակրայաներ՝ որպէս, որպիսի, զիարդ և այլ բառեր<sup>4</sup>:

Ա. Աբրահամյանի «Գրաբարի ձեռնարկում» քննարկվող բառերի հարցում չկա հստակութիւն: Մի կողմից, հետեւելով ավանդույթին, հեղինակը նախորդ քերականների պես հարցական դերանունները ներկայացրել է սահմանափակ կազմով՝ դուրս թողնելով դրանից պէս, շափ, ֆան, պիսի, բաղադրիչներով կազմված, ինչպես նաև յո՞, յո՞վ, ո՞ւր, ուստի՞, ե՞րբ, զիա՞րդ, ընդէ՞ր հարցականները, մյուս կողմից, մակրայաներին նվիրված բաժնում, ուր ընդարձակ ցանկերով տրված են գրաբարի մակրայաները և քննված նրանց կազմութիւնը (գրաբարի մակրայակերտ ածանցների ամբողջական ցանկը տրված է հետևյալ կազմով՝ բար, պէս, օրէն, ակի, անակի, ոյն, այն, ի, ցի, ափի, իցս, եֆ կամ էֆ), հիշատակված չէ նշված հարցականներից և ոչ մեկը<sup>5</sup>: Նույն ձեռնարկի բառարանում զիա՞րդ, ընդէ՞ր և յո բառերից առաջին երկուսը համարվել են եղանակավորող բառեր, իսկ յո-ն՝ մակրայ<sup>6</sup>:

Նշված հարցականներից մի քանիսը՝ ո՞րպիսի, ո՞րչափ, ո՞րքան, ո՞ւր, ե՞րբ, իրենց իմաստային-կիրառական հիմնական հատկանիշներով պահպանվել են նաև ժամանակակից հայերենում և գրեթե բոլոր լեզվաբանների կողմից ճանաչված են որպես հարցական դերանուններ:

#### ա) Ո՞ր պ է ս

Ամենից առաջ պետք է ասել, որ ուր-ով կազմված բարդութիւններում, գրաբարի համեմատութեամբ, շեշտադրութիւնը փոխվել է՝ առաջին վանկից անցնելով վերջին վանկի ձայնավորի վրա: Ո՞րպիսի դերանվան մեջ գրաբարի որոշ քերականների կողմից շեշտը դրվել է վերջին վանկի վրա:

Արդի հայերենին վերաբերող աշխատութիւններում որպես դերանվան հարցում մոտեցումները տարբեր են: Ս. Աբրահամյանը հարցական-հարաբերական դերանունների կազմից այն դուրս է թողել<sup>7</sup>: Այդպես են վարվել նաև Է. Աղայանն ու Հ. Բարսեղյանը դպրոցական դասագրքում<sup>8</sup> և Մ. Ասատրյանը իր բուհական դասագրքում<sup>9</sup>: Սակայն էդ. Աղայանը «Արդի հայերենի բացատրական բառարանում» որպես-ը համարել է հարցական-հարաբերական դերանուն (մյուս կիրառութիւնները նկատի չունենք)<sup>9</sup>: Որպես-ը հարցական-հարաբերական դերանունների մեջ է դրել նաև Հ. Հարութիւնյանը<sup>10</sup>: «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում» որպես-ը համարվել է միայն կապ<sup>11</sup>:

Իրոք, ժամանակակից հայերենում որպես բառն այլևս հարցական գործածութիւն չունի, բայց խիստ սակավադեպ պահպանվել է նրա հարաբերական նշանակութիւնը: Իրրև հարաբերական նշանակում է ինչպես, ինչպես ու, իսկ համապատասխան հարաբերյալի դեպքում՝ այնպես, ինչպես ու: Վեր-

<sup>4</sup> Անդ, էջ 84:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, էջ 267—275:

<sup>6</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Արդի հայերենի դերանունները, Եր., 1958, էջ 155:

<sup>7</sup> Տե՛ս Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, դասագիրք 5—7-րդ դասարանների համար, Եր., 1989, էջ 116:

<sup>8</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1989, էջ 178:

<sup>9</sup> Տե՛ս Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1151:

<sup>10</sup> Տե՛ս Հ. Հարութիւնյան, Ածական անուն, դերանուն, Եր., 1976, էջ 67:

<sup>11</sup> Տե՛ս Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, Բ. 4, Եր., 1980, էջ 121:

չին իմաստի համար «Արդի հայերենի բացատրական բառարանում» բերված է հետևյալ օրինակը. «Քե պիտի ապրի, թող ապրի որպես ստեղծել ես» (Ս. Այվազյան)<sup>9</sup>: Իսկ Վ. Տերյանի հետևյալ բանաստեղծական հատվածում՝ «Որպես լինո է մեր պայծառ տեսել հազար ձյուն, այնպես նոր չէ մեզ համար դավ ու դառնություն», որպես-ը համարվել է մակրայ՝ ինչպես որ նշանակութամբ<sup>10</sup>: Պետք է ասել, որ այս դեպքում ևս որպես-ը հանդես է գալիս իրրև հարաբերական դերանուն՝ ունենալով գլխավորում այնպես հարաբերյալը: Այս գործածություններն այնքան էլ հարազատ չեն արդի հայերենին, ձեռք են բերել հնարանության արժեք: Ընդհանուր առմամբ որպես-ը փոխարինվել է ինչպես դերանվամբ:

Ի տարբերություն ժամանակակից հայերենի, գրաբարում որպես-ն ուներ յայն կիրառություն: Այն հանդես էր գալիս՝

ա) Իրրև հարցական դերանուն, ինչպես՝ Յօրէնս զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռնուս (Ղուկ., Ժ, 26), Ո՞րպէս ասէք զՔրիստոս որդի Դաւթի (Ագաթ., 248), Ո՞րպէս կարաց այսքան ամս զդէմ ունել Արեացն (Փարպ., 384) և լն:

բ) Իրրև անուղղակի հարցում և բացականչություն արտահայտող բառ՝ Յաղագս թէ ո՞րպէս կամ զիա՞րդ կոչեցեալ եղև Արշակ արքայ Հայոց ի Շապհոյ արքայէ Պարսից (Բուզ., 4-րդ, ԺԶ, 105), թէ ո՞րպէս կամ ի՛ւ գնեալ իցէ, դայն ոչ ամենեքին գիտեն (Եզնիկ, 4-րդ, Ա, 174), Ո՞րպէս սիրելի են յարկք րո, Տէր զօրութեանց (Սաղմ., ԶԳ, 2) և լն:

գ) Որպես նախադրություն՝ Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն (Խոր., 212), Արդարքն որպէս զարմաւենիս ծաղկեացին (ՆՂԲ, հ. 2-րդ. էջ 536)...

դ) Որպես ստորագասական շաղկապ՝ երբ, երբ որ, հենց որ սշանակութամբ՝ Զայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ (Սաղմ., ԽԱ, 5), անդ նստէաք եւ լաեաք որպէս յիշեցաք մեք անդ զՍիոն (Սաղմ., ԺԼԶ, 1), Որպէս երեւեցար դու յերկնից, յայտնի եղև բարկութիւն քո (Սաղմ., ԼԾ, 9) և լն:

ե) Որպես ստորագասական շաղկապ՝ որպեսզի նշանակութամբ, որի համար ՆՂԲ-ն բերում է այսպիսի օրինակներ՝ Ի նմանէ խնդրեսցես դու, որպէս ուղղեսցին ճանապարհք քո: Բարձր արարեր զիս ի դրանց ի մահուանէ, որպէս պատմեցից զամենայն օրհնութիւնս քո» (հ. 2-րդ, էջ 537) և լն:

զ) Որպես հարաբերական դերանուն՝ ինչպես, ինչպես որ նշանակութամբ՝ Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց (Մատթ., Զ, 12), Որպէս փափաքէ եղչերու յաղբերս շուրց, այնպէս փափաքէ անձն իմ առ քեզ (Սաղմ., ԽԱ, 2), Տո՛ւր հրաման վասն իմ որպէս և կամիս (Ագաթ., 68)...

Որպէս հարաբերականի դեպքում գլխավորում հաճախ բացակայում է համապատասխան հարաբերյալը կամ էլ արտահայտված է լինում այդպէս, այնպէս, այսպէս, նոյնպէս, սոյնպէս, այնպիսի, նոյնպիսի և այլ ցուցական դերանուններով: Գլխավոր և երկրորդական նախադասութիւնների կապակցման մեջ նշված հարաբերականով և հարաբերյալներով կառույցները զրսեւորվում են հետևյալ տեսքով.

1. Որպէս—0, օրինակ՝ որպէս ուսոյց ինձ Հայրն իմ, զայն խօսիմ (Յովհ., Լ, 28), որպէս հաւատացերդ՝ եղիցի քեզ (Մատթ., Ը, 13), Որպէս սիրեաց զիս Հայր, եւ ես սիրեցի զքեզ (Յովհ., ԺԾ, 9), կատարեցէք զկամս թագաւորին, որպէս և ուսոյց զմեզ մեծն Զրադեշտն (Եղիշէ, 162), որպէս կամեցաւ, կարող եղև ի կուտէ ծնանել առանց ամուսնութեան (Եզնիկ, 1-ին, ԻԾ, 71), որպէս կամեցաւ՝ և արար (Ագաթ., 498), որպէս է ձեզ հաճոյ և խորհիք՝ ընտրեցէ՛ք որ բարին է (Փարպ., 388), որպէս կամին՝ ուրախացին (Խոր., 26) և լն:

2. 0—որպէս, օրինակ՝ սիրեսչիք զմիմեանս, որպէս եւ ես սիրեցի զձեզ:

(Յովհ., ԺԾ, 12), Իսկ արդ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ (Մատթ., ԺԸ, 33), աստուած միայն կարող իցէ առնել յոչընչէ ինչ որպէս և կամի (Ծզնիկ, 2-րդ, Ծ, 91), բանի ձերոյ լսեմք՝ որպէս և նախնիքն մեր լուան (Փարպ., 390), մեռանիս ի ձեռաց իմոց որպէս և Մուշեղն մեռաւ (Բուզ., 5-րդ, ԼԵ, 203), արդ արարէք որպէս և կամիք (Ծղիշէ, 135) և լն:

3. Որպէս—այնպէս, օրինակ՝ որպէս հայի մոմ առաջի հրոյ՝ այնպէս կորիցեն մեղաւորք (Սաղմ., Կէ, 3), որպէս պատուրեաց ինձ Հայր, այնպէս առնեմ (Յովհ., ԺԴ, 34), Եւ որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս սրասջիք եւ դուք նոցա (Ղուկ., Զ, 31), այլ որպէս եղեն՝ այնպէս խօսի (Ծզնիկ, 2-րդ, ԻԳ, 127) և լն:

4. Այնպէս—որպէս, օրինակ՝ եւ արարին այնպէս որպէս պատուրեաց նոցա Տէր (Ելք, է, 10), Եւ արարին նմա այնպէս որդիքն Իսրայելի, որպէս պատուիրեաց նոցա (Մննդ., Ժ, 12), յիմում ձեռին այնպէս էին, որպէս ընդ իմ նախնեացն ձեռամբ (Փարպ., 332), Եւ այնպէս կարգէ զաշխարհէ և զառարածոց, որպէս օրէնքն ասեն (Ծզնիկ, 4-րդ, Ա, 169) և լն:

5. Որպէս—նոյնպէս՝ որպէս եւ պատուիրեաց նոցա Տէր, նոյնպէս արարին (Ելք, է, 6), Զի որպէս եղեւ Յովնան նշան Նինուեացոց, նոյնպէս եղիցի և Որդի մարդոյ զզգիս այսմիկ (Ղուկ., ԺԱ, 30), որպէս վնասակարացն ընդ անվնասակարսն շմարթի բնակել, նոյնպէս և ոչ բարոյսն ընդ շարին մարթէր ի միում յարգանդի յղենալ (Ծզնիկ, 2-րդ, Զ, 92), Եւ որպէս յերկրի ոչ ունիմք իշխանութիւն ... նոյնպէս և յերկինս չունիմք իշխանութիւն (Ծղիշէ, 163) և լն:

6. Որպէս—սոյնպէս՝ Որպէս լուաք՝ սոյնպէս եւ տեսաք (Սաղմ., Խէ, 9), որպէս և նոքա անխրատք զիրեանց զառաքեալսն կամ զմարգարէսն կոտորեցին, սոյնպէս և դուք ըստ նոցին օրինակի կատարեցէք (Բուզ., 3-րդ, ԺԴ, 35), զի որպէս ամենայն տանուտէր ընդ տան իւրոյ և ընդ ընտանեաց հոգայ՝ սոյնպէս և մեք հոգամք ընդ մեր Հայոց աշխարհիս շինութեան (Ագաթ., 82) և լն:

Առանձին դեպքերում հանդիպում են նաև այլ կառույցի օրինակներ՝ այնպիսի—որպէս, նոյնպիսի—որպէս, որպէս—այնպիսի, որպէս—այսպէս, այդպէս—որպէս, որպէս—ի նմին, որպէս—ըստ նմին օրինակի և լն: Ահա՛ պատիւ և շքեղութիւն այնպիսի շիցէ գտեալ, որպէս դու գտանես (Փարպ., 276), ուրեմն արգասիքն ոչ նոյնպիսի մնացին՝ որպէս և էինն (Ծզնիկ, 1-ին, է, 22), Որպէս մեծ է ոգի քան զմարմին, այսպէս մեծ է տեսաւորութիւն մտաց քան զմարմնոց (Ծղիշէ, 84), այլ որպէս սովոր են ի բնէ թշնամանել զտեսարս իւրեանց՝ ըստ նմին օրինակի և այժմ կամին կատարել զչար կամաց իւրեանց ղխնդիրս (Փարպ., 54) և լն:

Ինչպես կարելի է տեսնել բերված օրինակներից, որպէս հարաբերականով երկրորդականները ազատ կերպով լինում են և՛ նախադաս, և՛ հետադաս: Միջադաս գործածությամբ երկրորդականները խիստ սակավադեպ են: Ահա մի երկու օրինակ՝ նոյնպէս եւ որպէս յաւուրսն Ղովտայ եղեւ, ուտէին, ըմպէին (Ղուկ., Ժէ, 28), ապա եթէ զնա նոյնպէս որպէս եղեն պահեաց (Ծզնիկ, 1-ին, ԺԱ, 32), Իսկ Կամսարականն Արշաւիր, որպէս և միշտ կամակատար էք բանի սրբոյ զօրաւարին, վաղվաղակի հանեալ առ ի նմանէ հրամանին՝ զկնի նաւաւարացն և փախստէիցն նետածիգ լիէր (Փարպ., 154) և լն:

## բ) Ո՞ր պի սի

Այս դերանունը գրաբարում ունի լայն գործածություն: Տարածված են ատկապես անուղղակի հարցման և հարցական կիրառությունները: Հանդի-

սյուն են նաև բացականչական, հարաբերական և այլ կիրառություններ:

Արդի հայերենում հարցական-հարաբերական համարվող այս դերանունը ևս ունի սահմանափակ գործածություն, որպէս-ի նման կանգնած է հնարանություն դառնալու ճանապարհին: Գրեթե լրիվ անգործածական են նրա հարցական դրսևորումները. պահպանվել են հիմնականում անուղղակի հարցման և հարաբերական գործածությունները: «Արդի հայերենի բացատրական բառարանում» որպիսի-ն համարվել է դերանուն երկու նշանակությամբ՝ «1. Արտահայտում է հարցում որպիսության մասին՝ ինչպիսի՞ նշ. 2. Արտահայտում է նմանություն հարաբերյալի հետ՝ ինչպիսի, ինչ տեսակ նշ.»<sup>12</sup>: Այստեղ չկան համապատասխան վկայություններ: Իսկ «Ժամանակակից հայերենի բացատրական բառարանում» բերված օրինակները վերաբերում են միայն անուղղակի հարցման և բացականչական գործածություններին, որոնք արտահայտում են ինչպիսի՞ և ինչպիսի՞ նշանակությունները: Ահա՝ «Առաջին անգամ ըլլալով հասկցալ թէ որպիսի վտանգներն պաշարյալ է: Ծս գիտեմ հիմա... որպիսի դժվար ջանքերով է մարդ կոում իր ոգին, որ նա կարծրանա»<sup>13</sup>:

Ժամանակակից հայերենում տեղի է ունեցել որպիսի դերանվան իմաստի նեղացում, գործածության և հաճախականության սահմանափակում, սակայն չի կատարվել խոսքիմասային փոփոխություն: Բայց դրան հակառակ, ժամանակակից հայերենի համար այն համարվում է դերանուն, իսկ գրաբարի համար՝ այլ խոսքի մաս:

Հին քերականներից, ինչպես նշվել է մեր նախորդ հոդվածում, Ոսկան Երևանցին էր, որ առաջին անգամ որպիսի-ն համարում էր դերանուն:

Հետագա քերականներից նույն բանը մասամբ նկատելի է Ստ. Մալխասյանցի մոտ: «Որոշիչ երկրորդական նախադասութիւնը,— գրում է նա,— կապում է գլխաւորի հետ ընդհանրապէս ուր և որպիսի յարաբերական դերանուններով, որոնց համապատասխանում են գլխաւոր նախադասութեան մէջ այն և այնպիսի ցուցական դերանունները, որոնք շատ յաճախ զօրութեամբ են հասկացում, կամ արտահայտում են դիմորոշ յօդերով»<sup>14</sup>: Բայց պետք է ասել, որ Մալխասյանցի այս մտտեցումը կայուն չէ: Այլ առիթներով այս հարցում նա միանգամայն հարազատ է մնում գրաբարի քերականներին՝ որպիսի-ն, ինչպես նաև որպէս-ը համարելով այլ խոսքի մաս<sup>15</sup>:

Չնայած գրաբարի քերականները որպիսի-ն դերանուն չեն համարել, սակայն աննկատ չեն թողել տարբեր նշանակություններով նրա գործածությունները: Այս տեսակետից առավել աչքի է ընկնում ՆՀԲ-ն, որտեղ հստակորեն ներկայացված են այդ նշանակությունները համապատասխան օրինակներով:

Ահա օրինակներ տարբեր գործածություններից՝

1) Հարցական՝ Արդ զորպիսի՞ հատուցումն բարեաց կարացուք մեք առնել նմա (Բուզ., 4-րդ, Ի, 112), Ո՞րպիսի հնարիւք լուծանել կարացուք, ասէ, զկապ սիրոյ պարսկայնոյն (Խոր., 88), իսկ այժմ ո՞րպիսի վտահոսութեամբ կարացուք զայնպիսի քաջորերոյ ունել զդէմ սակաւացեալքս (Փարպ., 272), Ո՞րպիսի համարձակութեամբ և ո՞յր հրամանաւ իշխեցէք գործել զայդպիսի մահապարտութեան գործ (Փար., 182) և լն:

2) Անուղղակի հարցման՝ կամիմ զի գիտիցէք դուք որպիսի՞ ճգնութիւն ունիմ յանձին վասն ձեր (Կողոս., Բ, 1), Յաղագս եպիսկոպոսապետին ներսէսի, թէ որպիսի՞ այր էր (Բուզ., 5-րդ, ԻԱ, 180), յառաջագոյն գիտէր թէ

<sup>12</sup> Էդ. Աղայան, Աշխ. բառարանը, հ. 2, էջ 1151:

<sup>13</sup> Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, հ. 4, Եր., 1980, էջ 121:

<sup>14</sup> Ստ. Մալխասյանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, էջ 121:

<sup>15</sup> Տե՛ս Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Եր., 1944, էջ 588:

որպիսի՝ ոք լինելոց է (Եզնիկ, 2-րդ, Ժէ, 118), տեսէք այսօր, եթէ զորպիսի՝ այր տոհմիկ... ոչ ինչ խնայեաց թագաւորն (Ծղիշէ, 162), կամ եղև գիտել տրա թէ՛ ո՛րք արդեօք և ո՛րպիսի արք տիրեալ իցեն ի վերայ աշխարհիս Հայոց (Խոր., 34), ամենայն Արիք ճանաչէին, թէ որպիսի՝ որեար էին (Փարպ., 302)...

3) Հարաբերական՝ Եւ եղիցի աղաղակ մեծ երկրի Եգիպտացոց, որպիսի ոչ եղև (Նլք, ԺԱ, 6), եւ կարկուտն սաստիկ էր յոյժ, որպիսի ոչ եղև յամենայն երկրին Եգիպտացոց (Նլք, Թ, 25), Եւ ես ահա տեղացից վաղիւ յայսմ ժամու կարկուտ սաստիկ յոյժ, որպիսի ոչ եղև յԵգիպտոս (Նլք, Թ, 18), Եղիցին աւուրքն այնոքիկ նեղութեանց, որպիսի ոչ եղև երբէք (Մարկ., ԺԳ, 9), Զի եղիցի յայնժամ նեղութիւն մեծ, որպիսի ոչ եղև ի սկզբանէ արարածոց աշխարհի մինչև ցայժմ (Մատթ., ԻԳ, 21) և լն:

4) Բացականչական՝ Արդ՝ Հայոց աշխարհս ո՛րպիսի մեծ և պիտոյ աշխարհ է (Փարպ., 330):

5) ՆՂԲ-ն բերում է օրինակներ նաև որպիսի բառի մի այլ նշանակութեան (ինչպես, օրինակ, ինչպես օրինակ) համար՝ համարելով այն շաղկապական իմաստ, ինչպես՝ «Փաղառութիւն. որպիսի՛, կար, գութ: Երկար փաղառութիւն. որպիսի՛, Մովսէ՛ս» և լն<sup>16</sup>:

Քանի որ որպիսի-ն հոլովվում է, ուստի այն տարբեր գործածութիւններում կարող է հանդես գալ տարբեր հոլովաձևերով՝ եզակի կամ հոգնակի թրվով, ինչպես՝ Որպիսիք եմք բանիւք թղթոցդ ի հեռուստ, նույնպիսիք և ի մօտոյ արդեամբք: Որպիսեօք արդեօք վարէր բանիւք (ՆՂԲ, Կ. Բ, էջ 537) և լն:

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, որպիսի հարաբերականով երկրորդականները ընդհանրապես լինում են հետադաս: Նախադաս կամ միջադաս գործածութիւններ գրեթէ չեն հանդիպում: Գլխավոր նախադասութեան մեջ բացակայում են համապատասխան հարաբերականներ՝ նոյնպիսի, այնպիսի, որոնք հասկացվում են զորութեամբ:

#### գ) Ո՞ր շ ա փ, ո՞ր ք ա ն

Այս դերանուններից լայնորեն տարածված է ո՞րշափ-ը՝ հարցական և անհարցական գործածութիւններով: Իսկ ո՞րքա-ը բավականին սակավադեպ է հանդիպում:

Արդի հայերենում որշափ-ը քիչ գործածական է, նրա փոխարեն հանդես են գալիս որքան, ինչքան դերանունները: Հակառակ որշափ-ին, որքան-ի գործածութեան շրջանակները նկատելիորեն ընդլայնվել են: Թեպետ այս դերանունների գրաբարյան իմաստների մեջ հետագայում էական տեղաշարժեր չեն կատարվել, այնուամենայնիվ, քերականների կողմից արդի հայերենի համար սրանք ևս համարվել են դերանուններ, իսկ գրաբարի համար՝ այլ խոսքի մաս:

#### 1. Ո՞ր շ ա փ

Ինչպես արդի հայերենում, այնպես էլ գրաբարում այս հարցականը գործածվում է նաև ոչ հարցական՝ հարաբերական, անուղղակի հարցման և բացականչական նշանակութեամբ՝ արտահայտելով որքան, որքան որ, ինչքան իմաստները: Ահա համապատասխան օրինակներ՝

ա) Հարցական՝ Պիթագորաս, ո՞րշափ իցէ կենցաղոյս շափ, յարցեալ յու՛մեմնէ, սուղ ինչ երևեալ՝ ծածկեցաւ (ՆՂԲ, Կ. Բ, էջ 536), Տես զարեգակն և

<sup>16</sup> ՆՂԲ, Բ. Բ, Եր., 1981, էջ 537:

զուտին և զաստեղս մեծամեծս՝ ո՞րչափ քան զմարդն իցեն (Ագաթ., 148), եթէ այնպիսի զարհուրեցուցիչք չէին՝ ո՞րչափ ևս առաւել շկայր երբէք յակաստանի (Եզնիկ, 1-ին, ԺԵ, 45), զի եթէ տերունական մարմինն, ասէ, ի գերեզմանի ծածկեցաւ ... ո՞րչափ ևս առաւել պարտ է մերում հողեղէն մարմինս ընդ հողով ծածկել (Բուզ., 3-րդ, ԺԴ, 37), ո՞րչափ ևս առաւել ձեզ արժան է... հոգ հանձին տանել՝ նախ զհոգիսդ բժշկել (Եղիշէ, 72) և լն:

Այսպիսի կիրառութիւնների համար բնորոշն այն է, որ նրանք չեն արտահայտում իրական հարցում, այսինքն՝ նրանցում իրական հարցման պատասխանը չի սպասվում: Մեր ձեռքի տակ եղած բոլոր հարցական օրինակները, ընդհանրապես, այս բնույթի են:

բ) Անուղղակի հարցման և բացականչական՝ Տեսանե՞ս ո՞րչափ մերձաւոր և ծանօթ էին Աստուծոյ (Ագաթ., 160), Ո՞չ լսես որչափ դոքա հակառակ քո վկայեն (Մատթ., Իէ, 13), Եւ գրէ, եթէ ո՞րչափ ամբողջութիւնք մեռան ի մահուանն Արտաշեսի (Խոր., 228), Զայդ ոչ գիտէք, ո՞րչափ երկայնամիտ լինիմ ես ի վերայ (Եղիշէ, 170), ո՞րչափ դժուարին է յուսացելոց լինչս մտանել յարքայութիւն Աստուծոյ (Մարկ., Ժ, 24), Իսկ եթէ առ մարմնաւորս այսուչէս, ո՞րչափ ևս առաւել առ հոգևորն (Եղիշէ, 15) և լն:

գ) Հարաբերական՝ հոսեցաւ ծաւալեցաւ ընդ դաշտս ամենայն և ելից առ հասարակ՝ որչափ ակն բաւեաց (Ագաթ., 416), խնամ տարեալ հոգացայ ամենայնի, որչափ միտք և հասողութիւն բաւեցին (Խոր., 36) և լն:

Որչափ հարաբերականով կապակցված երկրորդականները շարադասութեամբ ազատ են: Լայն տարածում ունեն նախադասներն ու հետադասները, իսկ միջադասները հազվադեպ են: Նախադաս կամ հետադաս շարադասութեան դեպքում գլխավորում համապատասխան հարաբերայունք կամ շեն լինում կամ էլ արտահայտված են լինում այնչափ, նոյնչափ, դոյնչափ և այլ ցուցական դերանուններով: Շարահայտակալն նման կապակցութիւնները հանդես են գալիս հետևյալ կառուցներով.

ա) Օ—որչափ՝ Սակայն պարտ է պատուել զնոսա, որչափ ի քէն է հրամայեալ (Ագաթ., 56), եւ տալով տացես նմա փոխ որչափ եւ խնդրիցէ (2-րդ օր., Ծ, 8), բաշխեաց բազմականացն նոյնպէս եւ ի ձկանցն որչափ կամեցան (Յովհ., 2, 11): Տե՛ս նաև վերևի օրինակները:

բ) Որչափ—Օ՝ որչափ ի մեծութիւն հասանիցես՝ ի խոնարհութեան կալօրր զանձն (Առակք, ԺԶ, 3), Այլ որչափ շան և յիշողութիւնք բաւեցին՝ պատմեցաք ստուգապէս (Խոր., 306), Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերքն, նա չիւր ծոցն ժողովէր բովանդակ զամենայն ոսկերս սանին (Բուզ., 4-րդ, ՄԹ, 152), Որչափ շարութիւն զանարդութիւն բազմացուցանէր, նոքա զևս քան զևս դորանային ի սէրն Քրիստոսի (Եղիշէ, 21), Որչափ զրկիս և աշխատիս և նեղիս, և համբերես, անպակաս գանձ պատրաստես քեզ յերկինս (Եզնիկ, Խրատք, 209) և լն:

գ) Այնչափ—որչափ՝ և արիւն այնչափ ելանէ, որչափ յոշխարէ ոչ ելանէ (Եզնիկ, 4-րդ, ԺԲ, 195), Եւ փորձել այնչափ իշխէ սատանայ, որչափ հրաման տանու (Եզնիկ, 2-րդ, ԻԱ, 125), և այնչափ ինչ արար ի նմանէ՝ որչափ Աստուծոյ վայելէր առնել արարածս (Եզնիկ, 1-ին, Դ, 16) և լն:

դ) Որչափ—այնչափ՝ Եւ որչափ ճնշէին զնոսա, այնչափ առաւել բազմաչառիս եւ զօրանային յոյժ (Ելք, Ա, 12), և որչափ ի բացն հեռանայ՝ այնչափ պակասէ ի նմանէ լոյսն (Եզնիկ, 3-րդ, Ա, 140), և որչափ մերձենայ, այնչափ սակաւ առ սակաւ աճէ ի նա լոյսն (Եզնիկ, 3-րդ, Ա, 140) և լն:

ե) Որչափ—նոյնչափ, որչափ—դոյնչափ՝ և լն՝ Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ (Բուզ., 4-րդ, ԺԵ, 104), Եւ երկինք, ասեն, որչափ ի վեր են՝ դոյնչափ ի խոնարհ են և դոյնչափ

յամենայն կողմանց զերկրաւ (Եզնիկ, 3-րդ, Ա, 140), Որչափ հեռի են արեւելք յարեւմտից, այնպէս հեռի արար ի մէնչ զանօրէնութիւնս մեր (Սաղմ., ՃԲ, 12) և լն:

## 2. Ո՞ր ւ ֆ ան

Այս հարցականը նշանակում է ինչիւ՞ն, ուրի՞ն: Հանդես է գալիս նաև գործան ձևով՝ ինչիւն ժամանակ նշանակութեամբ: Ունի նախադաս և հետագաս գործածութիւն՝ հարցականով և առանց հարցականի: Սակայն, ինչպես վերևում նշվեց, նման կիրառութիւնները համեմատաբար քիչ են: Ահա մի քանի համապատասխան օրինակներ՝ Ո՞րքան ներես, ո՞րպէս լոսնես (ՆՃԲ, հ. 2-րդ, էջ 538), Զորոց մեք սկսեալ ճառնեսցուք՝ որքան է կարողութիւն (Խոր., ՀՍ), Զի թէպէտ էր մարմնովն փոքր, այլ ոչ որքան Մակեղովնացին Աղեքսանդր (Խոր., 316), Որքան է գորութիւն քո, արա (ՆՃԲ, 538), զի սահմանք քաջաց, ասէ, զէնն իւրեանց, որքան հատանէ՞ այնքան ունի (Խոր., 34), ցորքան ժամանակս իցեմ հեթանոսաց առաքեալ, զպաշտօնն իմ փառաւոր առնեմ (Հռ., ԺԱ, 13), ցորքան ժամանակս ժառանգն տղայ է՝ չէ ինչ առաւել քան զժառայն (Գաղ., Գ, 1) և լն:

Ինչպես կարելի է տեսնել բերված օրինակներից, ուրի՞ն հարաբերականով երկրորդական նախադասութիւնների դեպքում գլխավորը կարող է ունենալ այնքան հարաբերայլը, որը, սակայն, ավելի հաճախ գորութեամբ է հասկացվում:

## դ) Յ՞ո, յո՞վ, ո՞ւր, ուստի՞

Գրաբարի քերականները նկատել են, որ յո՞, յո՞վ, ո՞ւր հարցականները ո՞, ո՞վ դերանունների տարբեր հոլովածներ են, որոնցում մթազնված է նըրանց երբեմնի հոլովական իմաստը, և 5-րդ դարից իսկ հանդես են գալիս իբրև բառական անկախ միավորներ՝ դերանվան նշանակութեամբ: Այսպես՝ յո՞, յո՞վ-ը ո՞, ո՞վ-ի հայցականի նախդրավոր, իսկ ո՞ւր-ը սեռականի ձևեր են, ըստ որում, յո՞, յո՞վ-ը նշանակում է ո՞ւր, դեպի ո՞ւր, ո՞ւր-ը՝ ո՞ւր, որտե՞ղ, ուստի՞-ն՝ որտեղի՞ց, ումի՞ց<sup>17</sup>: Զայլըխյանը նշում է, որ առանց հարցման գործածվելիս աշխարհաբար թարգմանվում են սովորաբար որ շաղկապի հարադրութեամբ՝ ուր որ, որտեղից որ<sup>18</sup>: Գրաբարի քերականները յո՞, յո՞վ, ո՞ւր, ուստի՞ հարցականները համարել են մակբայներ և խոսել նրանց նաև անհարցական գործածութիւնների մասին:

## 1. Յո՞, յո՞վ

Միևնույն նշանակութիւն ունեցող այս ձևերից տարածվածը յո՞-ն է, իսկ յո՞վ-ը խիստ հազվադեպ է հանդիպում: Յո՞վ-ի համար ՆՃԲ-ն բերել է այսպիսի օրինակներ՝ «յերեսաց քոց ես յո՞վ փախեայց», «Գնացեն յո՞վ և կամեսցին», «Յրուեցան, յո՞վ և կարաց աճապարել փախչել այր իւրաքանչիւր»<sup>17</sup>: Իբրև հարցական, յո՞-ն ունի բավականին հաճախակի գործածութիւն: Ահա մի քանի օրինակ՝ Կամ Յեսուն իբրև զմեռեալ յո՞ շոգաւ (Եզնիկ, 4-րդ,

<sup>17</sup> ՆՃԲ, Բ. 2, էջ 362—363 և, Ա. Բագրատունի, Քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վեներտիկ, 1852, էջ 77, Մ. Աբեղյան, Երկեր, Բ. 2, Եր., 1974, էջ 780:

<sup>18</sup> Վ. Զալըխյան, Ա. Այտընյան, Քերականութիւն ճայկազեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 167:



ԺԱ, 191), յո՞ ունիցիս փախչել (Ծզնիկ, 4-րդ, ԺԴ, 201), յո՞ տանիցիք զսպաս տէրունեան սեղանոյն (Ծղիշէ, 3-րդ, 54), Ուստի՞ գաս կամ յո՞ երթաս (ՆՀԲ, Տ. 2-րդ, 363), Եւ ես արդ յո՞ երթայց (ՆՀԲ, անդ) և լն:

Հանդիպում են նաև անուղղակի հարցման օրինակներ, ինչպես՝ զի գիտեմ ուստի եկի եւ յո երթամ. բայց դուք ոչ գիտէք ուստի գամ կամ յո երթամ (Յովհ., Ը, 14), Տէր, ոչ գիգեմք յո՞ երթաս (Յովհ., ԺԴ, 5), Զի որ գնայ ի խաւարի՞ ոչ գիտէ յո երթայ (Յովհ., ԺԲ, 35) և լն:

Որպես հարաբերական գործածվելիս յո, յով-ը անմիջապես շարադասվում է գլխավոր նախադասութիւնից հետո, երկրորդական նախադասութեան ւկզբում: Գլխավորում սովորաբար բացակայում է համապատասխան հարաբերյալը, որը հասկացվում է զորութեամբ: Ահա մի քանի օրինակ. զի մինչ մանուկն էիր, անձամբ անձին գօտի ածէիր եւ երթայիր յո եւ կամէիր (Յովհ., ԻԱ, 18), տուեալ քեզ ընդ այնր վրիժուց՝ զամենեսեան որ կամիցին հաւատալ ի քեզ տանել յո և կամիցիս (Ծզնիկ, 4-րդ, Ա, 173), ինուն զնաւս մեծամեծս երկաթով և տանին յո և կամին (Սեբերիանոս, տե՛ս թոռն., Տ. Ա, էջ 272—273), երթ գնա դու յո պէտք է քեզ (Բուզ., IV, ՄԾ, 146) և լն:

Հազվադեպ յո, յով հարաբերականով երկրորդականը կարող է շարադասվել գլխավորից առաջ, ինչպես՝ Յո զխաշնդ տանիք, և զհովիւս տարայք (Բուզ., 4-րդ, ՄԾ, 146):

## 2. Ո՞ւր

Ինչպես ասվեց, գրաբարի քերականները ո՞ւր-ը համարելով մակբայ՝ ժազումնաբանորեն կապել են ո՞, ո՞վ հարցական դերանունների սեռական հոլովածակի (ո՞յր) հետ: Ըստ Հ. Ահառյանի, ուր-ը բնիկ հայերեն բառ է՝ կազմված ր՝ մասնիկից և ու անորոշից, որ գալիս է հնիւ. k2u անորոշից<sup>19</sup>:

Ուր-ը հայերենի այն բառերից է, որն իր հարցական և անհարցական տարբերակներով լայն կիրառութիւն է ունեցել հայերենի զարգացման բոլոր փուլերում ու նրա բարբառային տարբերակներում: Բոլոր ժամանակներում սլահապանելով իր իմաստային-կիրառական էական հատկանիշները՝ այն հարստացել է իմաստային նոր նրբերանգներով, իսկ բարբառներում հանդես եկել հնչյունափոխական այլևայլ տարբերակներով (յուր, յույ, հուր, յոյ, վուր և լն)<sup>20</sup>:

Ո՞ւր հարցականի և նրա խոսքիմասային գնահատման հարցում հայ լեզվաբանութեան մեջ չկա միասնական մոտեցում, շնայած, ինչպես նշվեց, այն 5-րդ դարից ի վեր իմաստային-կիրառական էական փոփոխութիւնների շի ենթարկվել: Այսպես. արդի հայերենի համար քերականները ո՞ւր-ը միանշանակ համարում են հարցական, իսկ անհարցական ուր-ը՝ հարաբերական դերանուն<sup>21</sup>: Գրաբարի համար այդ երկու տարբերակներն էլ համարվել են մակբայ<sup>22</sup>, Հ. Ավետիսյանի և Ռ. Ղազարյանի «Գրաբարի ձեռնարկում» այն դրվել է հարցական-հարաբերական դերանունների մեջ (էջ 123—124):

Միջին հայերենի ուսումնասիրութեամբ զբաղվողներից Լ. Կարապետյանը

<sup>19</sup> Տե՛ս Հ. Ահառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. Յ, Եր., 1977, էջ 618:

<sup>20</sup> Տե՛ս Հ. Ահառյան, անդ, էջ 618, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Բ. Յ, Եր., 1944, էջ 610—611, Էդ. Աղայան, Աշվ. բառարան, էջ 1500 և լն:

<sup>21</sup> Տե՛ս արդի հայերենի վերաբերող լեզվաբանական աշխատությունների համապատասխան բաժինները:

<sup>22</sup> Տե՛ս Մ. Չամչյանի, Գ. Ավետիսյանի, Վ. Չալիխյանի, Ա. Բագրատունու քերականությունների մակբային վերաբերող բաժինները, ինչպես նաև ՆՀԲ, Բ. Բ, էջ 557—558 և Ստ. Մալխասյանցի բառարանի Աշված էջերը:

և Ս. Անթոսյանը ուր, երբ բառերի հարցական տարբերակների քննությանը չեն անդրադարձել, իսկ անհարցականները համարել են շաղկապ: Այսպես լ. Կարապետյանը գրում է. «Մագամբ դերանուններ լինելով, սրանք (ուր, երբ — Չ. Ա.) կարծես աժելի շատ շաղկապային կիրառություն ունեն, թեև երբեմն այս բառերի մեջ պարզ գիտակցվում է նրանց իմաստը»<sup>23</sup>: Ասվածից պետք է եզրակացնել, որ նշված բառերը միջին հայերենում բավականաչափ դործածվել են նաև ոչ-շաղկապային՝ դերանվանական իմաստով: «Այսպես՝ միջին հայերենում, — գրում է Ս. Անթոսյանը, — դերանուններից անցած շաղկապներից են՝ ուր, ուր, Բանի...»<sup>24</sup>: Սակայն տողատակում Ս. Անթոսյանը անում է մի կարևոր դիտողություն, որն էպես տարբերվում է լ. Կարապետյանի ունեցած ըմբռնումից: Ահա. «Ուր (<ոյր>), Բանի բառերը առանց հարցական նշանի պետք է ընդունել որպես հարաբերական դերանուններ»<sup>24</sup>:

Լ. Կարապետյանը միջին հայերենի հարցական դերանունները սահմանափակել է միայն ո՞վ, զի՞նչ, իսկ հարաբերականները՝ ով, ուր, զինչ բառերով<sup>25</sup>, այսինքն՝ նրանց կազմից հանիրավի դուրս է թողնվել ուր-ը: Մինչդեռ, ինչպես ցույց են տալիս փաստերը, ինչպես հայերենի բոլոր դրսևորումներում, այնպես էլ միջին հայերենում միանգամայն սովորական էին ուր-ի և՛ հարցական, և՛ հարաբերական գործածությունները: Ահա մի քանի օրինակ նահապետ Քուչակի հայերեններից՝ հրատարակված 1957 թ., և Գ. Աղթամարցուց.

ա) Հարցական՝ Ո՞ւր էիր, ուսկի՞ց եկիր, անծանօթ, ըզիս սիրեցիր (39), լո՞ւր կերթաս գիշերդ անհուն (70), Ո՞ւր է, որ սիրեցաք զիրար (175), Ո՞ւր տարան, վա՛րդ, ըզքեզ կամ ո՞ւր թագուցին (Գ. Աղթամարցի, տե՛ս Մարգարիտներ հայ քնարերգության, հ. 1-ին, էջ 194) և լն:

բ) Հարաբերական՝ Ուր գտնում՝ ի հոն պագնում (ՆՔ, 199), Ուր որ դու կանգնած լինիս, չէ պատե՛հ վառեն մոմեղէն (ՆՔ, 71), Ուր երթաս՝ բարով կենաս (ՆՔ, 236) և լն:

Ինչպես արդի հայերենում, գրաբարում ևս ուր հարցականը, դերանվան իմաստով, լայն կիրառություն ունի: Օրինակներ՝ Եւ կոչեաց Տէր Աստուած Զադամ, եւ ասէ ցնա, Ո՞ւր ես (Մննդ., Գ, 9), Ո՞ւր է որ ծնաւ արքայն հրէից (Մատթ., Բ, 2), Ասէին ցնա, Ո՞ւր է հայր քո (Յովհ., Ը, 19), Ո՞ւր են վանք իմ (Ղուկ., ԻԲ, 11), Գարձեալ թէ երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէին, ո՞ւր առնէր զյաշտն կամ ի՞նչ (Եզնիկ, 2-րդ, Գ, 83), Կամ ուստի՞ ելանիցեն օդաշունչ սիք հողմոցն բռնութեան, և ո՞ւր երթեալ դադարիցեն (Ագաթ., 150), Ո՞ւր են առանց Աստուծոյ գոռոզացեալքն. ո՞ւր են առանց Աստուծոյ իշխանացեալքն. ո՞ւր են արինահեղքն. ո՞ւր են պոռնկասէրքն... ո՞ւր են եկեղեցւոյ թշնամանիչքն (Փարպ., 438), Ո՞ւր է քաղցր աշացն հանդարտութիւն առ ուղիղս... ո՞ւր զուարթ շրթանցն ժպտումն առ բարի աշակերտացն հանդիպումն. ո՞ւր խնդամիտ սիրտն ընդունող արբանեկաց. ո՞ւր երկայն ճանապարհաց յոյսն հեշտացուցիչ (Խոր., 448) և լն:

Վերջին օրինակները ճարտասանական արժեք ունեն, որը բնորոշ է նաև արդի հայերենի ո՞ւր հարցական դերանվանը:

Հետևյալ օրինակում ո՞ւր հարցականը գործածվել է ինչպե՞ս նշանակությունամբ. Եւ ո՞ւր էր զի երկոքին ուրախ լինէին ի նմա՝ որ հակառակ միմեանց տային զպատուէրս (Եզնիկ, 4-րդ, Ե, 178):

Բավական տարածված են նաև ո՞ւր դերանվան անուղղակի հարցման օրինակները, ինչպես՝ զի թէ ոք գիտասցէ թէ ուր է, գուշակեսցէ զնմանէ զի

<sup>23</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ. Բ, Եր., 1975, էջ 201:

<sup>24</sup> Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Բ. Ա, Եր., 1972, էջ 454:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղը, Բ. Բ, էջ 85:

կալցին զնա (Յովհ., ԺԱ, 56), եւ զգուրն ոչ գիտեմ ուր իցէ (Դան., ԺԳ, 34), Իսկ անդէն սկսաւ հարցանել Գրիգորիոս, թէ ուր եղեալ են մարմինք վկայիցն ևնտուծոյ (Ազաթ., 124), Բայց թէ ո՛րպէս և ո՛ւր սորա իրք անցին անյիշատակելի, ես ոչ գիտեմ (Խոր., 126), կարդացեալ տեղեկասցի զվարս կենաց նորա և զիւր հայերէն նշանագրացն, թէ ե՛րբ կամ ո՛ւր և կամ յո՛յր ուրուք ձեռն գտանէ (Փարպ., 30) և լն:

Անհամեմատ ավելի շատ տարածված են ո՞ւր հարցականի հարաբերական-շաղկապական գործածութիւնները: Գրաբարի շատ ուսումնասիրութիւններում, որտեղ խոսվում է որ հարաբերականի մասին, միաժամանակ նշվում է, որ այդպիսի դերով հանգես են գալիս նաև շատ այլ բառեր, ի թիվս որոնց նաև ուր անհարցականը:

Որպես կապակցական բառ գործածվելիս ուր-ը նշանակում է ոչ միայն ուր, որտեղ, այլև (իհարկե, ոչ հաճախ) ետք, որովհետև, քանի որ: Այս մասին համապատասխան օրինակներով նշված է նաև ՆՆԲ-ում: Ահա մի քանի օրինակ. Ուր եւ արդ են իսկ ի ձեզ հետ եւ նախանձ, ո՞չ ապաքէն մարմնաւոր էք եւ ըստ մարդկան գնայք (Կորնթ., Ա, Գ, 3), Ուր ոչ գոն եզինք, մսուրք սուրբ էն. եւ ուր բազում արդիւնք են, յայտնի է եզին զօրութիւն (Առակք, ԺԴ, 4), թէ ուր փոքունքն կարեն մեղանշել մեզ, զիա՞րդ կարէաք ապրել (Ծննդի, 2-րդ, ԺԱ, 103), Զանմեղս դատապարտէիր, եւ զվնասակարս արձակէիր, ուր աստուծոյ ասացեալ էր, թէ զանմեղն եւ զարդարն մի սպանանիցես (Ա Կորնթ., Գ, 3) և լն:

Ուր հարաբերականով երկրորդականներն ունեն ազատ շարադասութիւն, լինում են և՛ հետադաս, և՛ նախադաս, և՛ միջադաս, բայց պետք է նկատի ունենալ, որ շատ ավելի տարածված են հետադաս գործածութիւնները, իսկ միջադասները բավական սակավ են: Ահա համապատասխան օրինակներ. Եւ այլն անկաւ յապառածի, ուր ոչ գոյր հող բազում (Մարկ., Դ, 5), Ժողովեցան ի գեւղն Աշտիշատ, ուր զառաջինն զեկեղեցին էր շինեալ (Բուզ., 4-րդ, Դ, 63), զի ուր եսն երթամ, դուք ոչ կարէք գալ (Յովհ., Ը, 27), և ուր գտցի որդի ող-չունի՝ հանգիցէ ողջոյնն ձեր ի վերայ նորա (Փարպ., 180), Բայց յերկրին Գեսեմ, ուր էին որդիքն Իսրայելի, ոչ եղև կարկուտ (Ելք, Թ, 26) և լն:

Կապակցական ի՞նչ առանձնահատկութիւններ են դրսևորվում ուր հարաբերականով երկրորդականների դեպքում: Դրանք բազմաբնույթ են: Ամենից առաջ պետք է նշել, որ այդպիսի երկրորդականների առաջադասութեան դեպքում սովորաբար զլիսավոր նախադասութեան մեջ համապատասխան հարաբերյալ չի լինում, իսկ հետադասութեան դեպքում, աննշան բացառութիւններով, լինում է որևէ հարաբերյալ՝ արտահայտված տարբեր խոսքի մասերով, հիմնականում՝ գոյականով: Դիմենք փաստերին, որոնք հանդես են գալիս հետևյալ կառույցներով.

1. Ուր—Օ՝ Կամիմ զի ուր եսն եմ, եւ նոքա իցեն ընդ իս (Յովհ., Ժէ, 24), զի հոգին սուրբ ուր կամի՝ բղխէ (Ազաթ., 250), իսկ ուր աստուածային յայտնութիւնն ի վերայ նորա լինէր, ի ձեռն գաւազանին գործէր զմեմամեծ ւրանշելիսն (Եղիշէ, 107), և լն: Տե՛ս նաև վերևում բերված օրինակները:

Այսպիսի դեպքերում շնայած բացակայում են ձևական հարաբերյալները (անդ, անդէն), սակայն գորութեամբ հասկացվում են:

Նման կառույցներում ուր հարաբերականը հաճախ զուգորդվում է և համադասական շաղկապով՝ էլ, որ նշանակութեամբ, ինչպես՝ զի ուր և քարոզիսցի աւետարանս այս ընդ ամենայն աշխարհ, խօսեսցի եւ զոր արար դա ի յիշատակ դորա (Մատթ., ԻԶ, 13), զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն վաղ-վաղակի (Ազաթ., 34), զի ուր և հասցէ՝ սպանցէ զնոսա (Խոր., 34), ուր և

գտանէին յամուրս ամուրս վայրեացն, սրոյ ճարակ տուեալ՝ դնէին գէշ թրու-  
նոց երկնից (Ծղիշէ, 77) և լն:

2. Ուր—անդ, ուր—անդր.— Այս կառույցներից առաջինի գործածութիւնը սովորական է, իսկ երկրորդը շատ սակավ է հանդիպում: ԱՏա՝ Զի ուր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին (Ղուկ., ԺԲ, 34), եւ ուր եսն եմ, անդ եւ պաշտօնեան իմ եղիցի (Յովհ., ԺԲ, 26), ոչ ապաքէն յայտ է՝ թէ ուր սաստ-  
կութիւնն պիտոյ է, անդ հուր կոշի. և ուր քաղցրութիւն՝ անդ լոյս կենարար (Ծղնիկ, 1-ին, ԻԳ, 66), Ուր մարմին է, անդր եւ արծուիք ժողովեցին (Ղուկ., Ժէ, 37), և լն: Ինքնին հասկանալի, որ այսպիսի դեպքերում, երբ ուր-ով երկ-  
րորդականը նախադաս է, գլխավորում գոյականով կամ այլ խոսքի մասերով արտահայտված հարաբերյալներ շեն կարող լինել: Սա լեզվամտածական ա-  
ռանձնահատկութիւն մը պայմանավորված մի իրողութիւն է, որ բնորոշ է ո՛չ միայն գրաբարին կամ առհասարակ հայերենին:

3. Գոյական—ուր.— Ինչպես նշվել է, սա ամենատարածված կառույցն է, որոնցում գոյականը կարող է հանդես գալ առանձին կամ իր որոշիչ լրացումներով՝ արտահայտված տարբեր խոսքի մասերով, մասնավորապէս՝ ցուցական դերանուններով: ԱՏա՝

ա) Միայն գոյական հարաբերյալով՝ Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում (Մարկ., Դ, 5), Իսկ մետասան աշակերտքն գնացին ի Գալիլիա՝ ուր ժամադիր եղել նոցա Յիսուս (Մատթ., ԻԸ, 16), զի յառաջ քան գնա երթիցէ ի քաղաքն, ուր էին սուրբ քահանայք Տեառն (Ծղիշէ, 143), Իսկ ըլուրն, ուր քաջամարտօքն անկաւ Բել՝ անուանեաց Հայկ (Խոր., 44), հասուցանէին առ դուրս հնձանին, ուր էին վանք նոցա (Ագաթ., 98) և լն:

բ) Որոշիչներ ունեցող գոյական հարաբերյալով՝ ես յամենայն ժամ ուսուցի ի ժողովրդեանն եւ ի տաճարի անդ, ուր ամենայն Հրեայք ժողովեալ էին (Յովհ., ԺԸ, 20), Յայնժամ դարձաւ ի կղզոյ ... անդի, ուր էր զնոսա արգելեալ (Բուզ., 4-րդ, ԺԳ, 93), Ապա ետ հրաման ընկենուլ զնա... յանապատ յանջուր տեղի մի՝ ուր ոչ բոյս ինչ դալար, և ոչ արմատ ինչ... լինիցի (Բուզ., 4-րդ, Զ, 77), Իմ այդ տեղի, ուր դուզ ես բազմեալ (Բուզ., 4-րդ, ՄԴ, 143), տանել ընկենուլ զնա յայնպիսի յանապատ տեղի՝ ուր ոչ մարդ կայցէ և ոչ ջուր ըմպելոյ (Բուզ., 4-րդ, Ե, 75), որ հանէր ի Մեծամօրի կամուրջն, ի տեղին յայն, ուր սովոր էին սպանանել զամենայն մահապարտս (Ագաթ., Կ, 118), սրբեցան ի նմին քաղաքի, ուր կապեալքն կային (Ծղիշէ, 196), եւ յամենայն տեղիս, ուր առաքիցես զմեզ՝ երթիցուք (Յեսու, Ա, 16) և լն:

Այս և նման օրինակներում բուն հարաբերյալները որոշիչներն են, որոնք ձևական դեր են կատարում, իսկ նրանց անորոշ իմաստը որոշակի ու հստակ է դառնում ուր հարաբերականով երկրորդական նախադասութիւնների միջոցով:

4. Անդէն—ուր, անդ ուր՝ զտեղի կալաւ անդէն ուր էին աւուրս երկուս (Յովհ., ԺԱ, 6), տուեալ պահել զնոսա անդէն ուր գտինն (Ագաթ., 96), Անդէն բնակեալ ընդ ծագս վիմացն, ուր յառաջու կայանքն էին մեծի Գրիգորի առաջնոյ (Բուզ., 6-րդ, ԺԶ, 231), Անդ երկիցեն զերկելո ուր ոչ իցէ երկելո (Սաղմ., ԺԳ, 5), Ոչ ապաքէն յանդիման Աստուծոյ ասիցէ զայս, անդ՝ ուր ամենայն զօրք հոգեղինացն զփառս Տեառն բարձրացուցանէին (Ագաթ., 156) և լն:

Այս կիրառութիւնները հաճախադեպ չեն:

5. Ամենայն ուրեմ—ուր՝ զի շարշարեցար ամենայն ուրեք ուր շարշարեցաւ հայր իմ (Գ թագ., Բ, 26):

Այսպիսի կիրառութիւն այլ օրինակներ մեզ չեն հանդիպել:

## 5. Ուստի՞

Հարցական-հարաբերական մյուս դերանուններին բնորոշ իմաստային-կիրառական առանձնահատկությունները, ընդհանուր առմամբ, բնորոշ են նաև այս բառին: Ամենից առաջ ուստի-ն հանդես է գալիս իբրև հարցական բառ և, իբրև այդպիսին, ունի բավականաչափ լայն գործածություն՝ արտահայտելով որտեղից, ինչից, ումից իմաստները: Ահա. Սկսաւ խօսել թագաւորն և ասէ. *Ուստի՞* գաս (Ագաթ., 70), Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հագարաց (Խոր., 212), Սմա ուստի՞ իցէ այս իմաստութիւն (Մատթ., ԺԳ, 54), Կամ ուստի՞ ելանիցեն օղաշունչ սիբ հողմոցն բռնութեան (Ագաթ., 150), Եւ ատամունքն հնդկին ուստի՞ իցեն այնչափ սպիտակ (Ծղնիկ, 4-րդ, ԺԾ, 202), մկրտութիւն Յովհաննու ուստի՞ էր՝ յերկնի՞ց թէ ի մարդկանէ (Մատթ., ԻԱ, 25), զի եթէ արեգակն և լուսին չև ևս էին լեալ... հազար ամն ուստի՞ երկէր (Ծղնիկ, 2-րդ, ԺԳ, 108), Այլ և յարութեան մարմնոյ շահաւատալ ուստի՞ իցէ (Ծղնիկ, 4-րդ, ԺԾ, 202) և լն:

Անուղղակի հարցման օրինակներ՝ ոչ գիտէր ուստի իցէ (Յովհ., Բ, 9), զձայն նորա լսես, այլ ոչ գիտես ուստի՞ գայ կամ յո՛վ երթայ (Ագաթ., 250), զի տեսցեն և յայտ արասցեն՝ թէ ուստի՞ եղև սկիզբն պատերազմացն (Բուզ., 3-րդ, ԻԱ, 48), մինչև ինքեանք իսկ մեծապէս զարմանային, թէ ուստի այս ամենայն գանձ ելանէ (Եղիշէ, 23), Ահա ասացաք և յաղագս Շամիրամայ, թէ ուստի՞ և ո՛րպէս (Խոր., 68), և լն:

Ուստի՞ հարցականը նույնպիսի հաճախականությամբ գործածվում է նաև առանց հարցականի, իբրև հարաբերական՝ արտահայտելով որտեղից, որտեղից ու, որից, որոնցից իմաստները: Այդպիսի հարաբերականով երկրորդականները հիմնականում շարադասվում են գլխավորից հետո: Սակավադեպ լինում են նաև նախադաս և միջադաս: Ինչպես ուր հարաբերականի դեպքում, այստեղ էլ, իբրև հարաբերականներ, հանդես են գալիս հիմնականում գոյականները, երբեմն էլ այլ խոսքի մասեր (դերանուններ և մակբայներ): Երբեմն էլ գլխավորում բացակայում է զորություն մեր հասկացվող հարաբերակալը: Ահա համապատասխան օրինակներ՝ խմբավորված ըստ շարադասության.

ա) Հետադաս՝ Համբարձի գաշս իմ ի լերինս, ուստի եկեսցէ ինձ օգնութիւն (Սաղմ., ԾԻ, 1), պարզև առեալ շիրիցուն զգեւղն՝ ուստի իսկ ինքն էր (Բուզ., 4-րդ, ԺԾ, 105), Եւ գտին զայրն ուստի դեւքն ելեալ էին (Ղուկ., Ը, 35), Եւ այսպէս շորեքին բնութիւնքն, ուստի աշխարհս կազմեալ է և կայ (Ծղնիկ, 2-րդ, Բ, 9), հնձեմ ուստի ոչ սերմանեցի, և ժողովեմ ուստի ոչ սրբոնեցի (Մատթ., ԻԾ, 26), Սկսցուք ուստի արժան է սկսանել (Եղիշէ, 5) և լն:

բ) Նախադաս՝ Քանզի ուստի սակաւ մի կասկածոտն էր, անտի աներկիւղ հաստատեցաւ (Եղիշէ, 7), Ուստի սկսար դու, այտի տաց քեզ պատասխանի (Եղիշէ, 163), Քանզի ուստի արժան էր առնուլ հարիւր դահեկանաւ շափ, կըրկին առնուին (Եղիշէ, 23) և լն:

գ) Միջադաս՝ ի շինեալ եկեղեցիսն՝ ուստի մերժեցանն, թերևս դարձ լիցի նոցա այսրէն (Բուզ., 4-րդ, Ե, 76), և ասեն՝ թէ աշխարհն այն, ուստի դոքա եկեալ են, սիրեն զայդ (Բուզ., 4-րդ, Ե, 75), քանզի և աշխարհն ուստի դերեցանն՝ Արտազ կոչի մինչև ցայսօր ժամանակի (Խոր., 218), ի նոյն բլուր ուստի էջն՝ վերջոտնեալ ելանէր (Խոր., 44) և լն:

Անհարցական ուստի-ն գրաբարում հաճախ հանդես է գալիս նաև բոլորովին այլ՝ ստորադասական շաղկապի արժեքով՝ ուստի, հետևաբար նշանակություն մը, ինչպես այսօրվա հայերենում: Ահա՝ ուստի յորժամ ի ջրհորս գրտանիցի՞ ճրագ առեալ իջանեն ի ներքս ըմբռնել (Ծղնիկ, 1-ին, ԻԾ, 75), զի ի պարզականացն յօդելոյ եղև հիւղն. ուստի լեալ իսկ երկի հիւղն և ոչ անա-

լար (Եզնիկ, 1-ին, Ը, 24), Ուստի և երգմամբ խոստացաւ տալ նմա զինչ և խնդրեսցէ (Մատթ., ԺԴ, 7), սովաւ ամենայն քրիստոնեայք ընդհանուր աշխարհիս ի նմանէ լուսաւորեցան վարդապետութեամբ. ուստի և ոսկերերանս կոչեցին զնա (Խոր., 418) և լն:

Արեւելահայ գրական հայերենում ուստի-ն պահպանվել է միայն իր շաղկապային նշանակութեամբ: Հայերենի որոշ բարբառներում գրաբարի պես այն գործածվում է իբրև հարցական՝ հետևյալ փոփոխված ձևերով՝ յուստի՞, յուստի՞ց, յուստե՞ն, ուսկի՞ց, ուսկե՞ն<sup>26</sup>: Երբեմն էլ այն մնում է անփոփոխ: Հիշենք Սայաթ-Նովայի հայտնի բանաստեղծությունը՝ «Ուստի՞ կու գաս, դարի՞բ բլբուլ... կամ «Կուունկ» ժողովրդական անմահ ստեղծագործությունը՝ «Կուունկ, ուստի՞ կու գաս»:

Ուրեմն գրաբարի ուստի հարցական-հարաբերական դերանունը պատմական զարգացման ընթացքում կորցրել է որպես հարաբերական գործածվելու իր նշանակությունը և հետագայում հայերենի հատկապես բարբառային դրուսկրումներում պահպանվել սոսկ որպես հարցական՝ հնչյունափոխված և անհնչյունափոխված ձևերով:

## ե) Ե՞րբ, գի՞տ՞րդ, ընդէ՞ր

Այս հարցականներն ունեցել են իմաստային-կիրառական այլևայլ առանձնահատկություններ և սլատմական զարգացման տարբեր ճակատագիր:

### 1. Ե՞րբ

Արդի հայերենում Ե՞րբ հարցականը ո՞ր ժամանակ, ի՞նչ ժամանակ նշանակությամբ ունի շատ լայն գործածություն և հայ լեզվաբանություն մեջ ճանաչված է որպես հարցական դերանուն:

Նույնպիսի նշանակությամբ Ե՞րբ հարցականը բավական տարածված է նաև գրաբարում, և քերականների կողմից այն դասվել է մակրայների շարքը: Ահա օրինակներ՝ Մինչև յե՞րբ անկեալ դնիս, ով վատ, Ե՞րբ ի քնոյ զարթիցես (Առակք, ԻԴ, 33), Տէր, Ե՞րբ տեսաք զքեզ քաղցեալ եւ կերակրեցաք... Ե՞րբ տեսաք զքեզ օտար, եւ ժողովեցաք... Ե՞րբ տեսաք զքեզ հիւանդ կամ ի բանտի, եւ եկաք առ քեզ (Մատթ., ԻԾ, 37—39), Ե՞րբ գայցէ արքայութիւն Աստուծոյ (Ղուկ., ԺԷ, 20), Ռաբի, Ե՞րբ եկիր այսր (Յովհ., Զ, 20), ա՛յ կախարդ, ցե՞րբ խաբես զմեզ (Բուդ., 5-րդ, ԽԳ, 214), Ե՞րբ տեսի դու զկրակ զնայուն կամ խօսուն կամ գիտուն (Եղիշէ, 175), Եւ Ե՞րբ իցէ՛ զի ելից ի թանձրադանդաղ ձանձրալի մարմնոյս այսորիկ. Ե՞րբ իցէ՛ զի տեսից զքեզ Տէր Յիւուս: Ե՞րբ իցէ՛ զի աներկիւղ եղէց ի մահուանէ. Ե՞րբ իցէ՛ զի տգիտութիւնս իմ հասցէ ի կատարեալ գիտութիւն (Եղիշէ, 155), Արք Արամեանք, մինչև յե՞րբ էք ծանրասիրտք (Խոր., 302), Եւ Ղազար զայդ քարոզէր. ո՞ւմ, կամ ո՞ւր, և կամ Ե՞րբ (Փարպ., 456) և լն:

Արդի հայերենի պես անհարցական երբ-ը գրաբարում ևս կարող է գործածվել անուղղակի հարցման նշանակությամբ, ինչպես՝ Ոչ ևս սովորեցին հարցանել զեկեալ ոք ի հեռաստանէ, եթէ Ե՞րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիս մեր (Եղիշէ, 203), զի ոչ գիտէք երբ ժամանակն իցէ (Մարկ., ԺԳ, 33) և լն:

Այսպիսի կիրառություններն, իհարկե, բավականին սակավադեպ են:

Խիստ հազվադեպ են երբ-ի, կարելի է ասել, հարաբերական գործածու-

<sup>26</sup> Հ. Աճառյան, Հանրեն արմատական բառարան, Բ. 3, Եր., 1977, էջ 611:

Քյունները՝ թայց զոր ինչ կամիք՝ արարէք վաղ, և կամ երբ կամիք (Փար., 236): ՆՆԲ-ն բերում է նաև այսպիսի օրինակներ՝ Հրեշտակք երբ լսեն զանունն աստուծոյ, ուրախ լինին: Երիկունն երբ ի մահիճս ելանես, համարեա թէ ի գերեզման ես իջեալ (Տ. 1-ին, էջ 671):

Երբ-ի հարաբերական գործածութեան սակավադեպութիւնը պետք է բացատրել նրանով, որ նույն նշանակութեամբ երբ-ին փոխարինում էին յորժամ, իբրև շաղկապական բառերը, որոնք շատ լայն տարածում ունեին և գրաբարի համար առավել բնորոշ ու տիպական էին:

Անհարցական երբ-ը գրաբարում հանդիպում է նաև մակբայական՝ երբեմն, մերթ նշանակութեամբ, ինչպես՝ Պիթագորաս յանձն իւր երբ թուփ, երբ ծառ, երբ ձուկն, երբ աղջիկ լինէր (ՆՆԲ, Տ. 1-ին, էջ 671):

Ինչպես նշում է ՆՆԲ-ն, ուշ շրջանի գրաբարում (13—14-րդ դդ.) երբ-ը գործածվում է նաև որպես շաղկապ՝ որովհետև, Բանի որ իմաստներով, ինչպես՝ Ընդէ՞ր է ինձ սրբութեան ծարաւել, երբ դու ես իմ սրբութիւն: Զիա՞րդ կատարեալ լինիմ, երբ շունիմ ինչք (Տ. Ա, էջ 671):

Հայերենի զարգացման հետագա փուլերում պահպանվում են երբ-ի երկու հիմնական՝ դերանվանական և շաղկապական նշանակութիւնները: Ըստ որում, անհամեմատ մեծ ծավալ են ստանում նրա թե՛ հարցական (աշխարհաբարի շրջանում), թե՛ անհարցական գործածութիւնները, որում պետք է որ կարևոր դեր խաղացած լինի բանավոր խոսքի և բարբառների ազդեցութիւնը: Երբ-ին փոխարինող իբրև, յորժամ բառերի գործածութեան շրջանակները բավականին նեղանում, իսկ արդի հայերենում իսպառ վերանում են:

Ինչպես ասվեց, միջին հայերենի ուսումնասիրողները երբ-ը (միջին հայերենում հանդիպում էր նաև եփ, երփ, յեբ և այլ գրութիւններով) համարել են միայն ստորագասական շաղկապ, որի պատճառով այն տեղ չի գտել հարցական-հարաբերական դերանունների կազմում: Լ. Կարապետյանը նշում է, որ երբ շաղկապը միջին հայերենում ուներ շատ լայն գործածութիւն: «Երբ շաղկապը,— գրում է նա,— ... ամենագործածականն է գործառական և տարածական առումով, այսինքն՝ գործածվում է տարբեր ժանրերի ու տարբեր բնույթի ստեղծագործութիւններում և մեծ հաճախականութեամբ...»<sup>27</sup>:

Ըստ երևույթին, երբ-ն, իբրև հարցական, միջին հայերենի շրջանում շատ քիչ է գործածվել: Համենայն դեպս կան այդպիսի օրինակներ, ինչպես՝ Խոքն դմակ ե՞րբ լինի, կամ զենած ոչխարն արօտի, Բոզին օֆա ե՞րբ լինի, կամ ընկած մարդուն սիրելի (ՆՔ, 277):

Սրան հակառակ, իրողք, մեծ ծավալ են ստանում երբ-ի շաղկապական գործածութիւնները՝ Բանի որ, որովհետև, եթե նշանակութիւններով՝ արտասայտելով պատճառի և պայմանի հարաբերութիւններ, օրինակ՝ Երբ սապր ու համբեր շունիս, սիրո տէր, ամ, հէ՞ր կու լինիս (ՆՔ, 61), Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի (ՆՔ, 50), է՞յ շարիս, ես քեզ ո՞նց ատամ երբ շունիս զոչ ոք կարևոր (Յրիկ, տե՛ս Մարգարիտներ հայ քնարերգութեան, էջ 112) և այլն:

Սրան զուգընթաց՝ բավական տարածված են նաև երբ-ի զուտ հարաբերական կիրառութիւնները, այսինքն՝ երբ նրա մեջ պահպանվում է ժամանակի իմաստը, և նրանով կապակցվում են ժամանակի երկրորդական նախադասութիւններ:

Արդի հայերենում շնայած երբ-ի շաղկապական կիրառութիւնը անհամեմատ ընդլայնվում է, սակայն, ինչպես ասվեց, լայն ծավալ են ստանում

<sup>27</sup> Ալեհարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, էջ 222: Այս մասին տե՛ս Գաև էջ 201, և հ. Ա, էջ 463—464:

նակ նրա հարցական և հարաբերական գործածությունները: Հայ լեզվաբանության մեջ երբ հարցականն, իբրև հարցական դերանուն, որն է տարակարծության տեղիք չի տվել, մինչդեռ անհարցական երբ-ն իր հարաբերական-շաղկապական նշանակությամբ տարբեր կերպ է ըմբռնվել ու գնահատվել:

Ըստ Մ. Աբեղյանի, բոլոր հարցական բառերը, այսինքն՝ դերանունները, երբ գործածվում են առանց հարցականի՝ երկրորդական նախադասությունը կապելով գլխավորին, «գործ են ածվում իբրև հարաբերական կամ շաղկապական բառեր»<sup>28</sup>: Բայց սա չի նշանակում, թե այս բառերը բոլոր դեպքերում դառնում են սովորական շաղկապներ: Ահա թե ինչու Աբեղյանի համար մի դեպքում ուր-ը հարաբերական դերանուն է, մի այլ դեպքում՝ շաղկապ<sup>29</sup>: Ինչ վերաբերում է երբ, երբ ուր բառերին, երբ գլխավորին են կապում ժամանակի երկրորդական նախադասություններ, դրանք համարել է հարաբերական բառեր՝ գործածված ուր հարաբերականի նշանակությամբ<sup>30</sup>:

Մ. Աբեղյանի պես Վ. Առաքելյանը ևս երբ-ը համարել է հարաբերական բառ, երբմն էլ՝ ուղղակի հարաբերական: Ահա՛ «Որոշիչ երկրորդական նախադասությունը կապակցվում է նաև երբ հարաբերական բառով»<sup>31</sup>, «Ժամանակի երկրորդական նախադասությունները գլխավորի հետ կապակցվում են երբ (երբ ուր), մինչև (մինչև ուր)... հարաբերական բառերով ու շաղկապներով»<sup>32</sup>, «Երբ հարաբերականով կապակցվող երկրորդական նախադասությունները...»<sup>33</sup>: Միաժամանակ Վ. Առաքելյանը նշում է. «Թե՛ գլխավոր և երկրորդական նախադասությունները ժամանակով շին համապատասխանում, և առավել ևս երբ գլխավոր նախադասությունը կիրառվում է սահմանական եղանակի ժամանակներով, իսկ երկրորդականը՝ հարկադրական, հրամայական, պայմանական, ըղձական եղանակների սպառնիչներով, ապա երկրորդական նախադասությունը կորցնում է իր ժամանակային նշանակությունը և ստանում է ավելի պատճառի և պայմանի նշանակություն. օրինակ՝ Երբ որ այդպես է, էլի կխոսես...»<sup>34</sup>: Այստեղից պետք է եզրակացնել, որ նման գործածություններում երբ-ը ավելի շաղկապի իմաստ է արտահայտում:

Արդի հայերենի ձևաբանությանն ու շարահյուսությանը նվիրված Ս. Արարահամյանի համապատասխան աշխատություններում երբ-ը համարվել է հարաբերական դերանուն<sup>35</sup>:

Դպրոցական դասագրքում երբ, երբ ուր բառերը համարվել են հարաբերական դերանուններ. «Ստորադասական շաղկապների հետ շփոթի շփոթել հարաբերական դերանունները, որոնք առանձին կամ ուր շաղկապի հարադրմամբ շաղկապների պես գերադաս (գլխավոր) և ստորադաս (երկրորդական) նախադասությունները կապում են իրար, բայց, ի տարբերություն շաղկապների, դառնում են նախադասության անդամ: Դրանք են՝ ով, ուր, ինչ, երբ, ուր, ուրեղ, ով ուր, ինչ ուր, երբ ուր, ուրեղ ուր և այլն»<sup>36</sup>:

Այս նույն տեսակետն է արտահայտված նաև Մ. Ասատրյանի աշխատության մեջ:

<sup>28</sup> Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Բ. 2, Եր., 1974, էջ 502:

<sup>29</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 508—511:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 506 և 522:

<sup>31</sup> Տե՛ս Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Բ. Բ, Եր., 1964, էջ 141:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 178:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 184:

<sup>35</sup> Տե՛ս Ս. Արարահամյան, Արդի հայերենի դերանունները, Եր., 1956, էջ 155, ժամանակակից հայոց լեզու, Բ. 2, Եր., 1974, էջ 220 և 538, Բ. 3, Եր., 1976, էջ 630, 638, 670, Հայոց լեզու, 2-րդ մաս, Եր., 1975, էջ 364 և 390, Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի 7—8-րդ դասարանների համար, Եր., 1985, էջ 268:

<sup>36</sup> Հայոց լեզու, դասագիրք 5—7-րդ դասարանների համար, Եր., 1989, էջ 289:



տություններում. «... հարաբերական դերանուններն իրենց ֆունկցիայով հավասարվում են ստորագասական շաղկապներին, սակայն վերջիններից տարբերվում են նրանով, որ հարաբերական դերանունները նախադասության անդամ են դառնում»<sup>37</sup>: Այս սկզբունքից ելնելով՝ Մ. Ասատրյանը երբ-ը համարել է հարցական-հարաբերական դերանուն՝ բերելով այդ կիրառության համար համապատասխան օրինակներ<sup>37</sup>: Մյուս կողմից «Ժամանակակից հայոց լեզու» աշխատության մեջ երբ, երբ որ բառերը դրվել են այն ստորագասական շաղկապների կազմում, «որոնք ժամանակի իմաստ ունեցող երկրորդական նախադասությունները կապում են գլխավորին»<sup>37</sup>: Ստացվել է ահա այսպիսի պատկեր. «Երբ հասան մի նշենու, Փոլադյանն անսպասելի գրկեց Մայային» օրինակում երբ-ը ժամանակի երկրորդական նախադասությունը կապել է գլխավորին և համարվել հարաբերական դերանուն (Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, էջ 169) կամ նույնատիպ մի այլ օրինակում՝ «Երբ ինն ամիս ինը ժամն անցավ, Առյուծ-Մհերը զավակ ունեցավ», երբ-ը նույնպես համարվել է հարաբերական դերանուն (Ժամանակակից հայոց լեզու, էջ 197, 2-րդ հրատ., էջ 182): Այդպես էլ մնացած բոլոր օրինակներում: Մինչդեռ այս կիրառություններից ոչնչով շտաբերվող այլ օրինակներում, որոնցում երբ-ը, հենց հեղինակի վկայությամբ, ժամանակի երկրորդական նախադասությունները կապում է գլխավորին, արդեն համարվել է ստորագասական շաղկապ: Ահա՛ «Երբ թաղման հանդեսը վերջացավ, արդեն երեք ժամն էր (Շիրվ.), Երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի մայրամուտ, Մթնածորում ստվերները թանձրանում են (Բակ.)»<sup>38</sup>: Պետք է ասել, որ նման օրինակներում ևս երբ-ը հարաբերական դերանուն է, որովհետև պահպանել է ժամանակի իր դերանվանական իմաստը: Այլ բան է, երբ երբ-ը գործածվում է բոլորովին այլ՝ զուտ շաղկապական նշանակությամբ՝ արտահայտելով պայմանի, պատճառի և այլ հարաբերություններ: Այդ դեպքում այն կարող է և անպայմանորեն պետք է դիտվի իբրև ստորագասական շաղկապ:

Երբ-ը հարաբերական-շաղկապական զուգահեռ արժեքներով է գնահատվել Գ. Գարեգինյանի աշխատություններում: Այսպես. «Ժամանակակից հայերենում շաղկապի և դերանվան խոսքի մասային համալուծող արժեքներով են հանդես գալիս որ, ինչ, ուր, որտեղ, երբ... հարաբերական դերանունները, որոնց նյութական իմաստի վերացական ու անորոշ լինելը նախադրյալներ է ստեղծում, որ դրանցից մի քանիսը հարաբերական որոշ կիրառություններում աստիճանաբար կորցնեն իրենց առանց այն էլ անորոշ իմաստը և հանդես գան նաև զուտ շաղկապական դերով: Այսպես, երբ, քանի, ինչպես, ինչ դերանունները ժամանակակից հայերենում արդեն շաղկապական կիրառություններ են ձեռք բերել, ուստի և հանդես են գալիս երկու խոսքի մասի՝ շաղկապի և դերանվան արժեքներով»<sup>39</sup>: Հեղինակի կարծիքով, ժամանակակից հայերենում կապակցական դերով կիրառվող երբ-ի մեջ գերակշռողը շաղկապական իմաստն է: Ահա. «Երբ— Արդի հայերենում այս բառը կապակցական դերով կիրառվելիս մեծ մասամբ շաղկապ է, թեև զերծ չէ նաև հարաբերական դերանուններից հատուկ որոշ հատկանիշներից»<sup>40</sup>: «Երբ բառը արդի հայերենում կարող է կապակցել ինչպես ժամանակի, այնպես էլ ենթակա, խնդիր, ստո-

<sup>37</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ. Բ, Եր., 1978, էջ 167—169, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1983, էջ 482, Եր., 1989, էջ 182:

<sup>38</sup> Մ. Ասատրյան, նշվ. աշխ., 2-րդ հրատ., էջ 399:

<sup>39</sup> Տն՝ Մ. Գարեգինյան, Ժողովապետը ժամանակակից հայերենում, Եր., 1963, էջ 46—47:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 294:

րոգելիական վերադիր, որոշիչ, պայմանի, պատճառի (հիմունքի) երկրորդականները: Տարբեր շարահյուսական պաշտոններ կապակցելու նրա այս հատկանիշը նպաստել է, որ այն առավելապես ընկալվի որպես շաղկապ<sup>41</sup>: Այստեղ ևս երբ-ով կապակցված ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում երբ-ը համարվել է ստորադասական շաղկապ: Արվել է միայն մասնակի վերապահում. «Պետք է միաժամանակ նշել, որ այն ժամանակ հարաբերյալի առկայության դեպքում նրա որոշ կիրառություններում պահպանվում է դերանվան արժեքը, մասնավանդ երբ գլխավորի և երկրորդականի գործողությունները իրենց կատարման ժամանակով և տևողությամբ լիովին համընկնում են»: Այս պնդումը խիստ կասկածելի է: Հենց հեղինակի կողմից բերված բազմաթիվ օրինակներում, որոնցում բացակայում է այն ժամանակ հարաբերյալը, և դրսևորված են ինչպես համաժամանակային, այնպես էլ տարժամանակային հարաբերություններ, երբ-ը ոչ թե շաղկապ է, այլ հարաբերական դերանուն, քանի որ պահպանել է իր ժամանակային նշանակությունը: Ահա՛ «Երբ ես նայում էի նրան, հուզվում էր, գլուխը կախում: Երբ փոսերը պատրաստվեցին, հիվանդ կովերին քշեցին փոսերի մոտ: Զիավորը կրկին անգամ խաչակնքեց, երբ ոտք դրեց ցամաքի վրա: Երբ Մարությանը դուրս գնաց, Շահյանը կարճ ժամանակով մնաց անորոշ մտախոհության մեջ»<sup>42</sup>:

Այս տեսանկյունից մոտենալու դեպքում կապակցական երբ բառի խոսքիմասային արժեքի գնահատականը էապես կփոխվի՝ հօգուտ նրա հարաբերական նշանակության:

Երբ կապակցական բառի խոսքիմասային գնահատման հարցում բավականին տարբեր են մոտեցումները ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում:

ժՀԲԲ-ում (ժամանակակից հայերենի բացատրական բառարան) ե՞րբ հարցականը բոլոր դեպքերում համարվել է մակբայ, իսկ ԱՀԲԲ (Արդի հայերենի բացատրական բառարան)-ում՝ հարցական դերանուն: Ժամանակի իմաստով գործածված երբ կապակցական բառը ժՀԲԲ-ում դիտվել է մերթ մակբայ (Երբ զվարթաձայն մեր երգը լռեց, Մուսլլ թամադեն բեխերն ոլորեց (ՀԹ), մերթ՝ շաղկապ, մերթ՝ գոյական, երբ հարաբերում է ժամանակային բառերին (Գեո առավոտը նոր էր լուսանում, երբ կառքը անցավ Արածանին (Ր), մերթ՝ դերանուն, երբ հարաբերում է ժամանակային բառերին (Մի գիշեր, երբ Բաղդատը քուն էր մտել (ԱԻ), իսկ ԱՀԲԲ-ում՝ միայն հարաբերական դերանուն: Մնացած դեպքերում նշված երկու բառարաններում էլ երբ կապակցական բառը համարվել է ստորադասական տարբեր հարաբերություններ արտահայտող շաղկապ՝ եթե, քանի որ, որ, մինչդեռ և այլ նշանակություններով<sup>43</sup>:

Այսպիսով, ըստ ԱՀՀԲ-ի, երբ-ը հարաբերական դերանուն է բոլոր այն դեպքերում, երբ ժամանակի երկրորդական նախադասությունները կապում է պիտավորին, այսինքն՝ երբ պահպանել է իր ժամանակային իմաստը: Անհարցական երբ-ը շաղկապ է, եթե հեռացել է իր ժամանակային իմաստից և արտահայտում է շաղկապական այլևայլ իմաստներ:

Կարծում ենք, այս մոտեցումը միանգամայն ընդունելի է և հենց նույն շփանիշով էլ պետք է գնահատել երբ շաղկապական բառը նաև գրաբարի պարագայում:

<sup>41</sup> Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1984, էջ 221:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 221 և 225:

<sup>43</sup> Տե՛ս Ժամանակակից հայերենի բացատրական բառարան, Բ. 1, Եր., 1969, էջ 589, Լեդ. Աղայան, նշվ. բառարան, Բ. 1, էջ 337:

## 2. Զ Ի ա՞ ր դ

Այս բառն ունի ավելի շատ հարցական կիրառություն՝ ինչպե՞ս, ինչո՞ւ հարցական դերանունների նշանակությամբ: Ահա մի քանի օրինակ՝ Զիա՞րդ եմուտ ի տունն Աստուծոյ (Մատթ., ԺԲ, 4), Զիա՞րդ վաղվաղակի ցամաքեցաւ թղենին (Մատթ., ԻԱ, 20), Եւ զիա՞րդ գնայցեն զօրութիւնք աստեղաց երկնից հաստատութեան (Ագաթ., 150), Զիա՞րդ պաշտիցեմք զարեգակն (Ծղիշէ, 1-ին, Ե, 11), զիա՞րդ հեղաւ արիւն արդար ի տարապարտուց (Բուգ., 5-րդ, Լ, 191), Զիա՞րդ լուիցուք, ասէ, երկդիմի հրամանացդ քոց (Ծղիշէ, 162), զիա՞րդ ըզմիտս իմ և զլեզուս պնդեցից (Խոր., 448) և լն:

Բավական հաճախ զիարդ-ը գործածվում է նաև առանց հարցականի, ինչպես մյուս հարցական դերանունները՝ արտահայտելով տարբեր իմաստներ:

ՆՆԲ-ն նշում է, որ անհարցական զիարդ-ը լինում է գոյական, այսինքն՝ նկատի է ունեցել միայն նրա գոյականական գործածությունը: Բոլորովին շի խոսվել նրա հարաբերական և այլ կիրառությունների մասին:

Ստ. Մալխասյանցը անհարցական զիարդ-ի մեջ առանձնացրել է նաև մի այլ՝ հարաբերական իմաստ՝ ինչպես ո՞ր նշանակությամբ, որը, ինչպես ցույց կտրվի ստորև, միանգամայն համապատասխանում է հին հայերենի փաստերին:

Եվ այսպես զիարդ-ը գործածվում է.

1) Անուղղակի հարցման նշանակությամբ, որը բավական լայն տարածում ունի, ինչպես՝ թէ ո՞րպէս կամ զիա՞րդ սպանաւ ի նմանէ (Բուգ., 5-րդ, ԼԴ, 182), թէ զիա՞րդ բարի աշխարհս ստեղծաւ ի բարեբարէ անտի, թէ զիա՞րդ վարեցան կարգք աշխարհիս (Ագաթ., 138), Եթէ զիա՞րդ Զօրայի առեալ զգօրս Հայոց դառնայ ի Յուլիանոսէ (Խոր., 326), և զհամ գինույ գիտէին ոչ զիա՞րդ լինի (Բուգ., 5-րդ, ԻԸ, 188) և լն:

2) Բացականչական նշանակությամբ, որ խիստ հազվադեպ է հանդիպում, ինչպես՝ Զիա՞րդ դժուարին է որ զինչսդ ունին, մտանել յարքայութիւնն Աստուծոյ (Մարկ., Ժ, 23):

3) Իբրև հարաբերական՝ ինչպես, ինչպես ո՞ր նշանակությամբ: Այս դեպքում զիարդ-ով կապակցված երկրորդականները կարող են լինել թե՛ նախադաս, թե՛ հետադաս: Ահա՛ որ զամենայն արար՝ զիարդ և կամի (Ագաթ., 136), որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեսցի (Բուգ., 5-րդ, Է, 174), զիարդ և կամք իցեն թագաւորութեան Յունաց, արասցեն մեզ (Բուգ., 5-րդ, ԼԳ, 197) և լն:

Երբեմն էլ ոճական նկատառումով զիարդ-ը հարադրվում է որպէս հարաբերականին, որոնք ունեն նույն նշանակությունը, ինչպես՝ Եւ զամենայն կարգս աստուածապաշտութեանն, որպէս զիարդ և ունէին յառաջ ժամանակաւ առ նախնեօքն, նոյնպէս և այժմ, ասէ, կայցին (Ծղիշէ, 131), գրեաց և եցոյց յարքունիս զամենայն ճշմարտութեամբ, որպէս զիարդ լուաւ ի բերանոյ նորա (Ծղիշէ, 130), որպէս զիարդ և գիտիցեն՝ ըստ կարգին իւրեանց արասցեն (Ծղիշէ, 85) և լն:

## 3. Ը ն դ է՞ ր

Այս բառը գործածվում է միայն հարցական հնչերանգով՝ ինչո՞ւ, ո՞ր նակությամբ: Այդպես է նաև արդի հայերենի ինչո՞ւ հարցական դերանունը, որը շունի հարաբերական կիրառություն: Ինչպես որ ինչո՞ւ-ն ժամանակակից հայերենում հարցական դերանուն է ճանաչվել հիմնականում նրա հարցական

Նշեցրանգի համար, նույն սկզբունքով էլ ընդէ՞ր-ը պետք է համարվի հարցական դերանուն գրաբարի համար, որն ըստ իմաստի և հնչերանգի որևէ տարբերություն չունի արդի հայերենի ինչո՞ւ դերանվան համեմատությամբ: Ահա մի քանի բնագրային օրինակ՝ ընդէ՞ր ոչ եղաք արժանի հաւասարել ընդ քաջ նահատակսն (Եղիշէ, 187), ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց (Քուզ., 4-րդ, ՄԳ, 141), ընդէ՞ր մարդասպան կոչիցի (Եզնիկ, 2-րդ, ԻԻ, 127), Եւ ընդէ՞ր ասիցէ առաքեալ (Եզնիկ, անդ) և ՚ն:

\* \* \*

Ժամանակակից հայերենի հարցական դերանունները համարելով մոտավորապես հետևյալները. ո՞վ, ի՞նչ, ո՞ր, ինչպիսի՞, որպիսի՞, ինչքա՞ն, ինչքա՞նք, որքա՞ն, որքա՞նք, ինչպե՞ս, ինչո՞ւ, ո՞րեւորդ, որտե՞ղ, ե՞րբ, ո՞ւր, քա՞նք, քանի՞սը, քանի՞եւորդ՝ պրոֆ. Մ. Ասատրյանը նշում է, որ դրանք չունեն իմաստային շփման եզրեր, և դրանց մի խմբի մեջ միավորողը նրանց հատուկ հնչերանգն է, որ ունեն նրանք հենց խոսքից, նախադասությունից դուրս: Ահա, թե ինչ է գրում. «Այդ դեպքում բերված բառերը ի՛նչ հիմունքով են համարվում դերանուններ և ի՛նչ հիմունքով են միավորվում մի խմբի մեջ որպես դերանվան առանձին տեսակ:

Հարցի պատասխանը թաքնված է այս դերանունների հենց բուն էություն մեջ: Բանն այն է, որ վերոհիշյալ դերանունները, որպես առանձին ու անկախ բառեր, հենց խոսքից, նախադասությունից դուրս, հատուկ հնչերանգ ունեն և դրանով էլ տարբերվում են դերանվան մեջ մտնող բառերի մյուս բոլոր խմբերից: Դրանում համոզվելու համար բավական է այս դերանունները համեմատել հարաբերակից մյուս դերանունների հետ, ինչպես՝ ես, դու, նա, բայց՝ ով, սա, դա, նա, բայց՝ ինչ, այս, այդ, այն, բայց՝ ուր, այսքան, այդքան, այնքան, բայց՝ քանի և այլն: Այսպիսով, պարզ է դառնում, որ հատուկ հնչերանգը բխում է վերոհիշյալ միավորների բուն բառային բնույթից և նրանց էությունն է կազմում»: «Եվ քննարկվող դերանունների գլխավոր առանձնահատկությունն էլ հենց այն է, որ ի տարբերություն դերանունների մյուս խմբերի, դրանք ունեն հատուկ հնչերանգ,— շարունակում է նա,— որը անկախ դիրքում հանդես է գալիս որպես հարցական հնչերանգ: Շարահյուսական տարբեր կապակցություններում, ըստ քննարկվող դերանունների խաղացած դերի, այդ հնչերանգը փոփոխությունների է ենթարկվում (բացականչություն, հատուկ շեշտվածություն), բայց որ միշտ էլ յուրահատուկ դրսևորումներ է ունենում, դա արդեն փաստ է»<sup>44</sup>:

Ինչ վերաբերում է հարցական դերանունների իմաստին, ապա քերականները նշում են այդ իմաստի առավել անորոշ ու վերացական լինելը մյուս դերանունների իմաստների համեմատությամբ<sup>45</sup>:

Հարցական դերանուններին բնորոշ հատուկ հնչերանգը և նրանց իմաստի բացարձակ անորոշ լինելը, որով նրանք ճանաչվում են իբրև դերանուն և դերանվան առանձին տեսակ, ամբողջությամբ վերաբերում են նաև գրասարի (և ոչ միայն գրաբարի) այն բոլոր հարցական բառերին, որոնց մասին վերևում առանձին-առանձին խոսք եղավ (ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ, քանի՞, ո՞ր, ո՞րպէս, ո՞րպիսի, ո՞րչափ, ո՞րքան, յո՞, յո՞վ, ո՞ւր, ուստի՞, ե՞րբ, զիա՞րդ, ընդէ՞ր): Հետևաբար, նույն սկզբունքով և նույն տրամաբանությամբ մոտե-

<sup>44</sup> Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, 2-րդ հրատ., էջ 164—165:

<sup>45</sup> Տե՛ս Մ. Ասատրյան, Ազվ. աշխ., էջ 166, Ս. Աբրահամյան, Արդի Ռայերեհի դերանունները, էջ 155—167:

նալու դեպքում, գրաբարի բոլոր հիշյալ հարցական բառերը ևս պիտի ճանաչվեն որպես հարցական դերանուններ, իսկ նրանց անհարցական կիրառությունները՝ հարաբերական դերանուններ, եթե այդպիսի դեպքերում պահանում են իրենց դերանվանական նշանակությունը:

**Г. М. АВЕТИСЯН** — Вновь несколько замечаний о вопроситель-но-относительных местоимениях габара. — В статье обстоятельно рассмотрены вопросительные слова *որպէս, որպիսի, որչափ, որքան, յո՞ւ, յո՞վ, ո՞ւր, ո՞ւտի, ե՞րբ, զիտ՞րդ, ը՞նդէր* габара, которые со стороны старых и новых грамматиков не относились к числу вопросительных местоимений и считаются вопросительными именами или наречиями. Привлекая богатый фактический материал, автор статьи показывает их вопросительное и относительное употребления, пытается доказать, что в своих семантических, фонетических и функциональных особенностях отмеченные слова проявляют признаки, присущие вопросительным местоимениям, следовательно, должны быть отнесены к разряду вопросительных, а их невопросительные варианты — к относительным местоимениям.